ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/14» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 30 նոյեմբերի 2022թ.

Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Մկրտիչ Խաչատրյան

Անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Տիրան Խաչատրյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/14» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետն էր 28.11.2022թ-ին ժամը 12:00-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվել էր 29.11.2022թ.-ին ժամը 12:00-ին:

2. Բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին

2.1 Հրավերով սահմանված կարգի պահանջներին համապատասխան մասնակից «ՏԵՔՍՏԻԼԱՐՏ» ՍՊԸ-ի և «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա էին անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր նիստը և հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել Մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակից՝ «ՏԵՔՍՏԻԼԱՐՏ» ՍՊԸ-ն և «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ-ն սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները:

2.2 Հանձնաժողովը որոշեց՝ Մասնակից «ՏԵՔՍՏԻԼԱՐՏ» ՍՊԸ-ի և «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Ընթացակարգի ընտրված՝ հաղթող, մասնակիցներին որոշելու և հայտարարելու մասին.

3.1. Հիմք ընդունելով Մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը և վերջնական գնային առաջարկները՝ Հանձնաժողովը որոշեց՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/14» ծածկագրով գնման ընթացակարգի

NN 1,2,3,5,6,7,8,9,10,11,12,16,17,26,27,28,29 չափաբաժինների մասով ՝ հաղթող, մասնակից ճանաչել «ԱՆԳԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին,

NN 4,13,26 չափաբաժինների մասով ընտրված՝ հաղթող, մասնակից ճանաչել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին,

NN 19,20,21,22,23,24 չափաբաժինների մասով ընտրված՝ հաղթող, մասնակից ճանաչել «ԷԼԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ին,

N 15 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող, մասնակից ճանաչել «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին,

N 14 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող, մասնակից ճանաչել «Լենտեքս» ՍՊԸ-ին,

N 18 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող, մասնակից ճանաչել «ՏԵՔՍՏԻԼԱՐՏ» ՍՊԸ-ին,

NN 30,31 չափաբաժինների մասով ընտրված՝ հաղթող, մասնակից ճանաչել «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ-ին:

4.Պայմանագիր կնքելու որոշման մասին.

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/14» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

4.1. Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

4.2. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/14» ծածկագրով գնման ընթացակարգի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.3. Ընտրված՝ հաղթող, մասնակցի հետ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Մ. Խաչատրյան**

Քարտուղար _____ **Ն. Աբովյան**

Անդամներ՝ _____ **Տ. Խաչատրյան**

_____ **Հ. Հովհաննիսյան**